




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿԶԻ
ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

(1969 թ. ապրիլի 6)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի հավատացալ ժողովուրդ,

Յնծացեք և ուրախ եղեք զի այսօր տոն է սուրբ Հարութեան:

Այսօր, Միածնաէջ Մայր տաճարի զանգակները կ'ավետեն մեր Փրկչին Քրիստոսի Հարությունը՝ հալոց բոլոր եկեղեցիներուն, հալ ժողովուրդի բոլոր զավակներուն ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Այսօր, գարնան այս յուսարացին, երբ արևին կենդանարար լույսը այնքան առատ կ'իջնէ համայն աշխարհի վրա, ուրախ լույս մը, նույնքան առատ և կենդանարար կ'ընթալի մեր հոգիներու աշխարհին:

Այդ այն լույսն է՝ որ մեր նախնիք կոչեցին «իմանալի լույս»: Այդ այն լույսն է՝ որ բեղմնավորեց և փառքով լեցուց հայ ազգի կյանքն ու պատմությունը ամբողջ: Այդ այն լույսն է՝ որ նույնիսկ մահը դարձուց «իմացեալ» և ճանապարհ բացալ դեպի հավերժություն:

Զի Հիսուս «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իրով մեզ զկեանս պարգևեաց»:

Զավակներ Մեր հարազատ, Զատիկ է այսօր, ցնծացեք և ուրախ եղեք: Միշտ արթուն ու լավատես, միշտ վստահ ձեր սեփական ուժերուն, ձեր կյանքի ճանապարհին վառ պահեցեք ջահը նախնյաց հավատքին և լույսը հայ հոգիին: Ուր ալ գտնվիք, ձեր հայրենի հողի կամ հեռու ափերու վրա, մնացեք հավատարիմ սուրբ Լուսավորչի և սուրբ Մեսրոպի տեսիլքներուն, մնացեք հավատարիմ Ավարայրի և Սարդարաբադի հերոսներու ուխտին, մնացեք հավատարիմ հայրենի հողին, մեր արդի կյանքին ու գործին, և ապագային: Եւ

ինչ ալ պատահի, անաստան, մեկ ու անբաժան, ամենայն հայոց սուրբ Էջմիածնի օրհնության ներքև:

Այո, Զատիկ է այսօր, և օր է՝ արդար ու համարձակ խոսքի, ի խնդիր մեր սուրբ եկեղեցվո և ժողովուրդի կյանքի խաղաղության, որ կրնա կենսագործվի միմիայն եղբայրական սիրով և միության ոգիով, պահպանումով մեր նվիրապետության դարավոր կարգ ու կանոնին և գիտակցությամբ մեր ազգային մնացած հիմնական շահերուն:

Իբրև Հայոց Հայրապետ, Մեր սեպուհ պարտքը կնկատենք, անդադար անազանգ հնչեցնել, հազար խոսքերով, հազար ձևերով, լսելի դարձնելու համար մեր օրերու հոգևոր-ազգային կյանքի գերագույն ճշմարտությունը՝ թե հայության միակ ապահով խարիսխը աստվածակառույց սուրբ Էջմիածինն է և մայր հողը հայրենի: Հայաստան, հայ ժողովուրդ, հայոց պատմություն իրարմե անբաժան են, և միասին անբաժան են՝ ս. Էջմիածնին:

Սփյուռքի Մեր զավակները պիտի մնան այնքան ատեն հայ, և այնքան հայ, ինչքան կարողանան իրենց հոգիի թելերով կապվիլ հավիտենական մայր Հայաստանին և հայաստանցի ժողովուրդին, և մանավանդ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, որ բազմադարյան գերագույն խորհրդանշանն է և երաշխիքը՝ հայոց կրոնական գիտակցության և ազգային միասնության:

Հաճախ, ծանր ապրումներ կճնշեն Մեր սրտին վրա, ի տես այն կենտրոնախույս ձգտումներուն և պառակտումներուն որոնք հառաջ եկած են սփյուռքի մեր եկեղեցական կյանքին ներս: Հաճախ կճմանինք այն բժշկին, որ ձեռքը դրած հիվանդի բազկերակին, մտահոգ կհետևի անոր մարմնույն մեջ բույն դրած քայքայիչ զարգացումներուն, և կփորձե դիմել ամեն հնարքի, զորացնելու համար հիվանդի մարմնույն դիմադրական ուժերը, անոր ինքնապաշտպանությունը: Եվ բժիշկին մեզմե՝ երբեմն հոռետես ենք ու անզոր, երբեմն հուսադրված ու լավատես, սակայն միշտ մտահոգ: Կտարվինք նաև խորհելու, թե սփյուռքահայ կյանքի ընդհանուր տեղատվության հիվանդագին դրսևորումներն մին, կհանդիսանան բաժանումները Մայր Աթոռին:

Սուրբ Զատիկի այս նվիրական պահուն, երբ կփառաբանենք ուժերը բարիին և հաղթությունը արդարության, երբ մեր հոգիներեն ներս կճառագայթեն պայծառ զգացումները սիրո և հաշտության, սուրբ Էջմիածնի մայրական հրավերը կբերենք Մեր բոլոր պանդուխտ զավակներուն, որ հեռու մնան պառակտումներեն, որ ձերբազատվին ամեն տեսակի թյուր իմացություններե, և մեկ սիրտ մեկ հոգի, մտածեն ու գործեն ամրացնելու իրենց հոգևոր միությունը, մեկ ու անբաժան եկեղեցիով, մեկ ու անբաժան նվիրապետությամբ, մեկ ու անբաժան Հայոց ընդհանրական Հայրապետությամբ:

Այսպես է միայն, որ բոլոր հայերը, եկեղեցվո սպասավորներ թե հավատացյալներ, արժանի պիտի ըլլան խաղաղ ու հաշտ խղճով դիմավորելու մեր Տիրոջ և Փրկչի Հարության ավետիսը:

Բավական չէ, լոկ խոսքով տոնախմբել Հարությունը Փրկչին մեր Քրիստոսի, այլ մանավանդ մեր սրտի, հոգիի, իրավ ապրումներով, սիրո և խաղաղության կենդանի գործով: Զի խոսքը առանց գործի կմնա մեռյալ:

Մենք կհավատանք թե բուն հայ ժողովուրդը, անկախ այլ կարգի ըմբռնումներե, Մեզ քաջ կհասկնա: Կհասկնա Մեր խոռովքը, Մեր իղձը արդար, և իր հոգիով ուխտի կուգա այսօր ի լույս Էջմիածին:

Այո, Մեր սիրտը կվկայե թե այս տոնական սրբազան ժամին, այստեղ ս. Էջմիածնի այս կամարներուն տակ, հավաքված է մեր ազգը համայն, անխըտիր, իր բովանդակ հոգիով՝ ամբողջ ու անբաժան:

Արդ, դու՛ն ժողովուրդ հայոց, դու՛ն «հօտ փոքրիկ» անգին, աննման; հագիվ փրկված պատմության մեծ արհավիրքներեն, և վերջապես հասած՝ խաղաղ ու անվտանգ կյանքի մը ափին, դու՛ն թևերդ երկինք տարածած, աղոթե այսօր, և մենք ալ քեզի հետ, որ Հարության լույսը հաղթե խաղարին, մեզին, բարին՝ չար ձեռքին, արդարությունը՝ սուտին, կեղծիքին, ազատությունը՝ բռնության դավին, խաղաղության երկնառաք ոգին՝ պատերազմի մահվան ույժերուն, զի «յարեաւ Քրիստոս» արեգակն արդար:

Աքանջեազորձ տեսիլքը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի, խորհուրդը՝ քրիստոսակերտ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և ոգեղինացած պատմությունը հայոց բազմաշարժար բայց վերածնած ժողովուրդի, թող հավետ մնան ձեզի ամենուդ ներշնչարան և առաջնորդող լույս:

Խաղաղություն աշխարհին համայն, եղբայրություն ազգերուն բոլոր, սեր և միություն մեր եկեղեցիին, Մեր զավակներուն ամեն:

Արդ, սիրելիք Մեր «սրբեցեք ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զանգուած որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր գեճաւ Քրիստոս»:

Ձեզ և մեզ մեծ ավետիս, Քրիստոս հարշալ ի մեռելոց: Ամեն:

